Պայմանագրի կնքման միանվագ միջնորդավճար՝ պայմանագրի գումարի նկատմամբ	1%
Պարտադիր տարեկան Գույքի ապահովագրություն *(առաջին տարվա համար՝ գույքի ամբողջ արժեքի, իսկ յուրաքանչյուր հաջորդ տարի՝ լիզինգի պայմանագրի նկատմամբ)*	0,43%
Հաճախորդ	20-63 (ներառյալ) տարեկան պարբերական եկամուտներ ունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ
Մարումներ*	Ամսական հավասարաչափ կամ մայր գումարի հավասարաչափ մասերով
Առավելություններ	Հայտի ուսումնասիրման և սպասարկման վճարի բացակայություն Լիզինգի տրամադրում ՀՀ ամբողջ տարածքում Ժամկետից շուտ մարում առանց տույժերի և տուգանքների

**Հաճախորդի կողմից տոկոսագումարների և լիզինգի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում չկատարված գումարային պարտավորությունների նկատմամբ կհաշվարկվի տույժ՝ օրական 0.13%-ի չափով և հաճախորդի մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում, ինչպես նաև, համաձայն լիզինգի պայմանագրի, Վարձակալը պարտավոր է լիզինգի առարկան վերադարձնել «ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ին: Միևնույն ժամանակ «ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ն իրավունք ունի պահանջել լիզինգի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարում: Մարման չափը կարող է տարբերվել՝ կախված տվյալ ամսվա օրերի քանակից*

Լիզինգի տոկոսագումարի հաշվարկման օրինակ՝

- Գույքի արժեքը - 5,000,000 ՀՀ դրամ
- Կանխավճարը - 1,000,000 ՀՀ դրամ (20% գույքի արժեքից)
- Լիզինգի մարման ժամկետը - 60 ամիս
- Լիզինգի պայմանագրի գումարը – 4,000,000 ՀՀ դրամ
- Տարեկան Գույքի ապահովագրությունը-0,43%
- Միջնորդավճարը - 1% պայմանագրի գումարի նկատմամբ
- Տարեկան անվանական տոկոսադրույքը – 9,9%
- Տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 11,28%
- Այս օրինակում լիզինգի ամսական մուծման չափը կկազմի 84,791 ՀՀ դրամ
- Օրական տոկոսագումարը կկազմի Լիզինգի պայմանագրի գումարը (մնացորդ) × Լիզինգի տոկոսադրույք ÷ 365 = (4,000,000×9,9%÷365) = 1,084.93 ՀՀ դրամ

Լիզինգի մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ

(ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում)՝

- Տույժ/տուգանք
- Տոկոսագումար
- Մայրգումար

- Լիզինգ տրամադրելու դրական որոշման գործոններն են հաճախորդի վարկունակության գնահատումը,
- Լիզինգի մերժման գործոններն են՝ վերլուծության արդյունքում ստացված անբավարար ֆինանսական ցուցանիշները, հաճախորդի վատ վարկային պատմությունը, անհրաժեշտ ապահովվածության անբավարարությունը/բացակայությունը, Բիզնեսի խորհրդատուի մասնագիտական կարծիքը, ռիսկերի կոմիտեի մասնագիտական կարծիքը
- Լիզինգի հայտի վերաբերյալ որոշումը կայացվում և տեղեկացվում է հաճախորդին անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց առավելագույնը 2 բանկային օրվա ընթացքում, եթե Հաճախորդին այցելելու կամ ֆինանսատնտեսական վերլուծություն իրականացնելու կարիք չի առաջացել
- Լիզինգի տրամադրման դրական որոշման դեպքում լիզինգը տրամադրվում է հաճախորդին առավելագույնը 2 բանկային օրվա ընթացքում
- Պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքները տրամադրվում են էլեկտրոնային փոստի միջոցով՝ երեսնօրյա պարբերականությամբ, եթե հաճախորդը հաղորդակցման այլ տարբերակ չի ընտրում
- Պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ **պարտադիր տրամադրման ենթակա** վարկային հաշվի քաղվածքը և այլ տեղեկությունները տրամադրվում են **անվճար**:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՋԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԼԻԶԻՆԳ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆ ՁԵՋ, ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (առկայության դեպքում) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ԼԻԶԻՆԳԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վարկային ռեգիստրին տրամադրվող տեղեկատվություն.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

Երաշխավորների համար.

Տեղեկացնում ենք, որ

- Եթե լիզինգառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:
- Ձեզ տրամադրվելու է, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:
- Հաղորդակցումը իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով:
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին:
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ:
- Լիզինգի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

Երաշխավորն իրավունք ունի

- Ցանկացած ժամանակ լիզինգատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Լիզինգառուից հետ ստանալու Ձեր կողմից լիզինգի համար վճարած գումարները, ինչպես նաև լիզինգառուի փոխարեն կրած այլ վնասները: